




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԵՏՀՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԽԱԴԱՐԱՆ

№ 29, 33, 39

№ 29, 33, 39

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Լ Ե Ք Ե Ն Դ Ն Ե Ր Բ Ա Լ Լ Ա Դ Ն Ե Ր Յ Ե Ր Ք Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՌԻԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1934

ՀՈՎՀ. ԲՈՒՄԱՆՅԱՆ

ԼԵԳԵՆԴՆԵՐ
ՅԵՎ
ԲԱԼԼԱԳՆԵՐ

Պատ. Խմբագիր՝ Յե. Չարսնց
Նյութերը տպագրուելու համար պատրաստեց Նվարդ Թումանյան
Ֆին. Խմբագիր՝ Տ. Խաչվանյան
Սրբապետիչներ՝ Սոս. Հակոբյան, Վ. Մանուկյան

Հրատար. № 2750. Դրամվերտ № 8313(բ),
պատվիր № 2089, տիրաժ 5000. Պե-
տ. հրատար. տպարան, օտ. ֆ. 6 72X105, մեկ
աղ. թերթում 102.40 աղ. նշ. հանձնված
և տրամադրուելու 5/X 1933 թ. օտորա-
պրված և տպագրուելու 14/II 1934 թ.

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

I

Ժամանակով Կատուն ձոն եր,
Շունն ել գլխին գրգռել չուներ,
Միայն, գիտեմ վոչ՝ վորդիանց վորդի
Ճանկել եր մի գառան մորթի:
Յեկավ մի որ, ձմեռվան մըտին,
Կատվի կուշտը տարավ մորթին:

— Բնաջողում, ուստա Փիտո,
Գլուխըս մըրսեց, ի սեր Ասծո,
Ան հս մորթին ու ինձ համար
Մի գրգռել կարի գլխիս հարմար:
Վարձիդ համար միամիտ մընն,
Համա, համա շատ չուշանա:

— Աչքիս վըրա, քեռի Գուշի,
Մի գրգռել ա, հո մի քուրք չի.
Գու թանկագին խաթեր համար
Ուրբաթ որը համեցեք տար:
Փողի մասին ավելնորդ ա,
Մեր մեջ խոսալն ել ամոթ ա.
Ինչ մեծ բան ա, տո հեր որհնած,
Միմյն, միմյն մի գրգռել վարձ:

Ուրբաթ որը քեռի Բուշին՝
 Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին
 Թափ-թափ տալով՝ ծանդըր ու մեծ,
 Ուստա Կաավի շեմքում կանգնեց:
 — Ուստեն հւր ա... փափախս հւր ա...
 — Մի քիչ կնցի, հրես կերես:»

II

Ուստեն լեկավ քուրքը հառին,
 Շանը տեսավ, բեղի տակին
 Իրեն-իրեն քիչ փընթփընթաց,
 Ու մուշտարու վըրա թընդաց.
 — Յուրտը տարաւ... վաճ տընաշեն,
 Չես թող անում մի շունչ քաշեն.
 Հեշտ բան հո չի, հըլա նոր եմ
 Յըրցամ տըվել, թե վոր կարեմ:
 — Դե հեր որհնած, ետենց ասա,
 Եդ բարկանալդ ել ընչիս ա:
 Փող եմ տըվել, շուտով կարի,
 Թե չե՝ ասա եզուց արի:
 Համ ասում ես, համ չես կարում,
 Համ խոսում ես, վըրես դոռում,
 Համ, համ, համ, համ,
 Բանի, ախպեր, գընամ ու կամ...
 Ասավ Բուշին ու նեղացած
 Վերադարձավ գըլուխը բաց:

III

Մին ել լեկավ, դարձյալ չը կար.
 Ես անգամը դիպան իրար.

Ել անպատիվ, անկարգ խոսքեր,
 Ել հին ու նոր, ել հերն ու մեր,
 Ել գող Փիսո՛, ել քաջալ Շո՛ւն...
 Բանը հասավ դիվանբաշուն:
 Շունը մինչև գնաց, լեկավ,
 Ուստա Կատուն կոտըրն ընկավ,
 Գըլուխն առավ ու մի գիշեր
 Հայդե կորավ, ես կորչիլն եր...

IV

Են որվանից մինչև որս ել
 Շունն ես բանը չի մոռացել,
 Մաքում հըլա դեռ պահում ա.
 Վորտեղ Կատվին պատահում ա,
 Վեր ա թըռչում, վըրա վազում,
 Իրեն մորթին լեռ ա ուզում.
 Իսկ սեերես Կատուն հանկարծ
 Յետ ա դառնում ու բարկացած
 Փըշտացնում ա. մըթամ նոր եմ
 Յըրցամ տըվել, թե վոր կարեմ:

1886

ԱՆԲԱՆՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Մի որ Չըղջիկն ու ճաշն չեկան
 Թե՛ չեկ դառնանք վաճառական:
 Ասին ու խելք խելքի տըվին,
 Հավան կացան, պայման դրին.
 Բայց՝ արի տես... վոր փող չունեն.
 Շատ միտք արին, թե ինչ անեն.
 Վերջը չեկան Փըշի մօտը,
 Ընկան նըրա ձեռն ու վոտը,
 Ու մուրհակով,
 Շահով, կարգով,
 Փող վեր առան բավականին,
 Ինչքան պետք էր իրենց բանին:
 Չիղջը մընաց, տընպան դառավ,
 Ճաշը բոլոր փողերն առավ,
 Առավ, նստեց նավի միջին,
 Հասավ Մըսըր, Չինուճաչին,
 Փարս, Հընդըստան,
 Արաբըստան...
 Ե՛լ թանկագին քիրմանի շալ,
 Ե՛լ մարդարիտ, զըմրուխտ ու լալ,
 Հընդու խուրմա, փըստա, բադոմ,
 Յեվ... վե՛ր մեկի անունը տամ.
 Ինչ վոր տեսավ, աչքը սիրեց,
 Առատ-առատ նավը լցրեց:
 Նավը լցրեց հազար բարով
 Ու չես՝ չեկած ճանապարհով
 Ուրախ-ուրախ առն էր գալիս:

Ճամփին ծովում սարսափելի
 Արեկոծում, մորիկ չեղավ,
 Չարկեց, տարավ ապրանք ու նավ,
 Միայն սովաքար ճաշը ենոր:
 Աղաովեցավ մեղի ու տըկոր:
 Աղաովեցավ՝ փառք իր Ասծուն.
 Բայց ի՞նչ սըրտով խեղճը դա տուն.
 Գա՛ — ի՞նչ սաի պարտքատերին,
 Վճնց՝ չերեա իր ընկերին...
 Ընկերն ենտեղ՝ դուռը կըտրած,
 Աչքը ճամփին, վիզը ծըռած,
 Համբու՛մ ե որն որի վըրա,
 Թե՛ մեր ճաշը չերբ պիտի դա...
 Յերկար նայեց,
 Ճամփեն պահեց,
 Շատ լավ ու վատ չերազ տեսավ,
 Մի՛նչե պարտքի որը հասավ,
 Ու՛ մուրհակի թուղթը ձեռին,
 Փուշը տընկվեց կըտեր ծերին.
 — Ե՛լ բարեկամ, ի՞նչ բանի չեք.
 Ել չեք ասում, թե պարտք ունեք...
 Գործ բըռնեցիք, հորս ողորմի,
 Յետ տվեք դե փողս հիմի:
 Թուղթ եք տվել՝ վախտ իմացեք,
 Ամոթ, աքուռ, ա՛ն ունեցեք...
 Թալան հո չի՛... մեղք եմ չես ել...
 Ախպեր, եսպես բան եք տեսել
 Վոսկի տա մարդ իրեն ձեռով,
 Չը կարենա առնի դոռով...
 Պրանից հետո դե արի դու.

Ու ձեռ մեկնի աղքատ մարդու...»
 Գորգոռում եր վողջ թառակում,
 Հայհոյում եր, խաչտառակում.
 Ամեն մարդ ել, ով վոր լրսում,
 Հենց մի բերան են եր ասում.
 — Այ ամոթ ձեզ, Չըղջիկ ու Ճաշ,
 Ի՞նչ ենք լրսում. — վաշ, վաշ, վաշ, վաշ—
 Անուններդ վաճառական
 Ու ես տեսակ խաչտառակ բան...
 Վաշ, վաշ, վաշ, վաշ,
 Չըղջիկ ու Ճաշ...»
 Չըղջիկն հապես միշտ լրսելիս
 Սիրտը բերնով դուրս եր դալիս:
 Բարկանում եր իրեն մըտքում,
 Անիծում եր, չըքում, թըքում.
 — Այ քու տունը քանդվի, ու Ճաշ,
 Այ դու դառնաս զըրողի փաշ,
 Ես ի՞նչ բան եր, վոր դու արիր,
 Գըլխիս ես ի՞նչ փորձանք բերիր...»
 Ու խընդրում եր ամեն անգամ.
 — Մի նեղանա, Փուշ բարեկամ,
 Շատ ես կացել,
 Կանց մի քիչ ել.
 Թուղթ ըստացա չերեկ Ճաշից,
 Թե դուրս չեկա Արարիալից.
 Վորտեղ վոր ե՛լ շուտով կըգա,
 Դեռ մի բան ել ավել կըտա...»
 — Յես չեմ ուզում ավելն, ախպեր,
 Կանխիկ համրած իմ փողը բեր.
 Շահ եք գըրել,

Վախտ եք դըրել.
 Ինչ գըրած ա, են եմ ասում,
 Ձեզնից ավել բան չեմ ուզում:»
 — Ձե, աղա Փուշ,
 Թե վաղ, թե ուշ,
 Փողն իր կարգին, շահն իր կարգին,
 Իսկ պատիվդ... չես իմ հողին...
 Յես հույս ունեմ... ասենք պարտք ենք...
 Բայց չե՞ ախար մենք ել մարդ ենք...
 Ձե, քու արածն ով մոռանա,
 Իր Աստվածն ել նա կուրանա...»
 Խեղճը հապես լեզու ածավ,
 Շատ հույս տրվավ, շատ խոստացավ,
 Շատ սուտ ասավ պարտքատերին,
 Շատ ըսպասեց իր ընկերին.
 Բայց ընկերը չըկա, չըկա:
 — Ես ի՞նչ ցավ եր, Աստված վըկա.
 Ի՞նչ իմ բանն եր՝ մըտա մեջը,
 Վոր խաչտառակ լինեմ վերջը...
 Ի՞նչպես պըրծնեմ ես կըբաղից,
 Ես ահագին պարտքի տակից.
 Ել ի՞նչ ասեմ,
 Վհնց ըսպասեմ.
 Նա լե՛րը կը գա, ի՞նչ իմանամ,
 Վհր շուրն ընկնեմ... հե՛մ մոտ գնամ...»
 Շատ միտք արավ,
 Դեռ դեն թըռավ,
 Ինչ վոր ուներ տանը, հագին,
 Վողջ հավաքեց, տրվավ պարտքին,
 Յիս մերկացավ,

Եւ չը պրծալ:

Վերջը տեսաւ, վոր ճար չեղաւ,
Թեւեր առաւ, ինքն եւ փախաւ,
Փախաւ, կորաւ, վոր եւ ենպես
Դատարկ, սընանկ ու սեւերես
Վոչ պատահի պարտքատերին,
Վոչ յերեւ լուս աշխարհին:

Անուհետեւ իր նամուսից
Չըղջիկը՝ մերկ, փախած լուսից,
Յերեկները դես դեն թագչում,
Դիշերն եւ միշտ մըթնում թռչում,
Վոր չերեւ իր թաշ-թուշին,
Վոչ պարտքատեր աղա Փուշին:
Ճաշն եւ ծովում,
Ճըշում, ծըվում,
Ջուրն եւ մըտնում,
Դուրս եւ պըրծնում,
Թեկն տալիս,
Ման եւ գալիս,
Թե մի գուցե բախար բանի,
Կորուստն եւ չեւ ջրից հանի:
Իսկ Փուշն արդեն հուլար հատած,
Ճանկ ու արտամ սուր պատրաստած,
Կողքովն ու վոր անց եւ կենում
Դաշում եւ փեշն ու հարցընում,
Թե չեն տեսել մեկն ու մեկին,
Եւ վրը Ճաշին կամ Չըղջիկին:
Ու են որից մինչեւ որս եւ
Մեկը մեկին դեռ չեն տեսել:

ԱՆԻԾԱԾ ՀԱՐՍԸ

Վաղ ժամանակ մի հայ շենում
Մի հարգեւոր հարսն եւ լինում:
Նըբա բերնից կեսուր-կեսաւ
Չեյին լսել մի շունչ, մի բաւ,
Չեյին տեսել շուրթը մի որ...
Եսպէս խոնարհ ու հարգեւոր:
Մի որ մենակ ողում նըստած,
Իր ճոխ մաղերն արծակ թափած,
Ազատ, անփութ սանրում, հշուտում,
Հետն եւ ձենով յերգ եր ասում:
«Աշխարհքը բանտ,
Մեջը անբախտ
Յես մի գերի անխընդում.
Սիրուն շորեր,
Ջահիլ որեր
Ի՜նչ եմ անում ես բանտում:
Երնեկ ծըտին,
Ճլուղքի միջին
Ծըլլելում եւ, թըրթըտում,
Թըռչում՝ սիրած
Ընկերն առած,
Այստ, կանանց արտերում:
Ա՛խ, սե ըլի,
Չըքվի, փըլի
Ծընված որը աղջկա,
Ցավ ու խընդում
Փակված սըրտում,

Ծիծաղ չը կա, «ախ» չը կա...»
 Մին ել հանկարծ բացվեց դուռը,
 Ու ներս մըտավ ծեր կեսուրը:
 — Հո՛, պո՛, պո՛, պո՛, կանչեց խեղճը,
 Գետին պատուխ, մըտնեմ մեջը...
 — Հոպոպ դառնաս,
 Անամոթ հարս:
 Մի տես, մի տես,
 Թե լըրբի պես
 Գըլուխը բաց,
 Ազատ նըստած՝
 Վա՛նց ե կանչում,
 Չի ամանչում...
 Լեզուդ լալի,
 Մազդդ թաղքի,
 Գըլխիդ կըպչի
 Սանրը միջի:
 Ասավ-չասավ,
 Մին ել տեսավ՝
 Սանրը գըլխին
 Հարսն առաջին
 Հոպոպ դառավ,
 Յերգիկեց թըռավ,
 Ու վերացավ,
 Վեր, հեռացավ:

Են եր ու են.
 Խեղճն են որեն
 Հանդերն ընկած՝
 Հոպոպ մընաց.

Միշտ ել են հին
 Սանրը գըլխին,
 Չալիկ-մալիկ,
 Լեզուն լալիկ,
 Անխոս ու լուս,
 Մոլոր, տըխուր:

Բացց յերը հանկարծ
 Միտն ե դալիս,
 Վոր գլխաբաց
 Յերգ աօելիս՝
 Իր կեսուրը
 Բացեց դուռը,
 Վեր ե թըռչում
 Սըրտատըրով
 Ու դեռ ճըչում.
 — Հո-պոպ... Հո-պոպ...

1898

ԱՐԾԻՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Յեղաթի մի անգամ անտառի միջին
Արծիթն ու Կաղնին եսպես վիճեցին,
Թե վերն իրենցից շատ տարի կապրի,
Վերն ե զիմացկուն ու պինդ ավելի:
Արծիթն ասով յես, Կաղնին ել թե՛ յես:
Յերկուսն ել համառ ու հրապարտ եսպես՝
Մեծ-մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,
Վերջը ես տեսակ պայման կապեցին:
Ժամանակ գրբին հինգ հարյուր տարի
Արքան հավքերի, արքան անտառի,
Վոր թե վորոշած են որին հասնեն,
Են որը մին ել զան իրար տեսնեն:
Ու Արծիթն իսկույն Կաղնուց հեռացավ,
Հըզոր թեկերը շարժեց, վերացավ
Դեպի ամպերը, դեպի ժայռերը,
Ուր անց ե կացնում իր լավ որերը:
Կաղնին ել փրոնց ճյուղերն արմատի,
Ու ենպես հուժկու կանգնեց անտառում,
Վոր վաչր չընկնի ել հինգ հարյուր տարում:
Դարեր անց կացան: Յեվ անա մի որ
Արծիվը չեկավ ծերացած, անզոր,
Ծըվոցը կըտրած, տըկար, հեալով,
Թույլ-թույլ թեկերը հազիվ քարշ տալով
Տեղ հասավ մի կերպ, նաչեց դեռ ու դեն,
Տեսավ, վոր Կաղնին ընկել եր արդեն.
Ճյուղերը թեկ դեռ թարմ ու կանաչ,
Ընկել եր անեղ փոթորկի առաջ:

— Հե՛յ, կանչեց. գոռոզ, պարծենկոտ Կաղնի,
Դե լավ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգ հարյուր տարուց մի ժամ ել դեռ կա,
Ընկել ես արդեն, անկոտրում հըսկա:
— Հինգ հարյուր տարի սպրեւ եմ կանգնած,
Եդքան ել կապրեմ դեռ եսպես թեք ընկած,
Մինչև լըրանա մի հազար տարին.
Պատասխան տրվավ ընկած վիթխարին:

1898

Հ Ս Կ Ա Ն

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻՑ

(ՀԱՏՎԱԾ)

Լավ չեմ հիշում թե վոր դարում,
Հին ժամանակ, մեր աշխարհում
Ասում են թե՛ կար մի իշխան.
Մի մեծ իշխան ենքան ուժեղ,
Վոր թե մարդիկ նըրա աչքում՝
Թե հասարակ ձանձ ու մըժեղ:
Ինչ վոր աներ ու կամենար,
Որենք էր են լերկերի համար.
Ո՞վ էր գըլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կը դար նըրա զիմաց:
Ուներ անթիվ ու անքանակ
Վոչխարի հոտ, մարդի բանակ,
Կովի նախիր, խոզի բոլոկ,
Յերամակներ ձիու, շորու,
Ես բոլորը ցըրված, փըռված
Մինչև ծովի ափը հեռու:
Մինչև ուր վոր քըշեր, տաներ,
Իր աշխարքի սահմանն են էր.
Ո՞վ էր գըլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կը դար նըրա զիմաց:
Մի անգամ էլ ես իշխանը
Յերը նըստած էր Կրեն տանը,
Լեղապատառ ներս ընկավ տուն,
Իր հոտերի վերակացուն.

— Ապրած կենաս, մեր տեր իշխան,
Հապա հապես հրաշք մի բան.
Արածում էր ծովի ափին
Բազմութունը քու հոտերի,
Մին էլ տեսնենք՝ ծովի միջին
Մի վիթխարի մարդ է դավ:
Մի վիթխարի մարդ էմ ասում,
Վոր մենք իր մոտ լու յենք չընչին.
Ծովը մինչև ծունկն է հասնում,
Իսկ գըլուխը ամպի միջին:
Յեկավ, կանգնեց մեր հանդիման
Ու վորոտաց ամպի նըման.
«Ո՞վ է, ասավ, հապես բերում
Թողնում ապրանքն իմ հանդերում.
Կորեք իսկույն, դուք մարդուկներ,
Ձեռքս քանի չի հասել դեռ...»
Ես ժամանակ վեր կացա լես
Ու պատասխան տըվի հապես.
«Եղ սեակնած, մոլթ ամպերում
Ձուր ես եղքան բարձըր գոռում.
Ով էլ լինես, ուսկից էլ դաս,
Ես մի բանը լավ իմանաս,
Դու, լերկնահաս, ահեղ հրակա,
Մեծ իշխանի ապրանքն է սա.
Ո՞վ է գըլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կը դա նըրա զիմաց:»
Բայց ինձ իսկի չը լսեց էլ
Ես անձոռնի աժդահակը,
Ես ամպերից ցած կըռացավ,
Ձեռը կոխեց ծովի տակը,

Դուրս հանեց մի ձուկն ահագին
 Ու դեմ արավ արեգակին,
 Վոր խորովի...» — Հագիվ եսքան
 Պատմեց հովիվն իշխանական
 Ու վեր ընկավ շունչը փչեց:
 Խիստ զայրացավ իշխանը մեծ.
 — Ո՞վ ե, ասավ, համարձակվել
 Իմ տերութւան սահմանն լեկել
 Ու եղպես ել վրբես հաշում...
 Ինձնից ուժեղ չեմ ճանաչում
 Յես վոչ մի տեղ ու վոչ մեկին...»
 Եսպես ասավ ու զայրագին
 Հըրամացեց՝ զորքերը դան:
 Հըրամացեց՝ զորքերն լեկան.
 — Կեցցե մեր տեր, մեր թագավոր,
 Անհաղթ, անմահ, ամենազոր...
 — Ապրեք, ասավ իշխանը սեպ,
 Յեկեք խկուկն ու զընացեք,
 Մանուկ ու ծեր
 Իմ առյուծներ,
 Ո՞վ ե, տեսեք, վրբես հաշում
 Ու իմ ուժը չի ճանաչում:
 Յուլց տըվեք դուք, վոր վոչ մի ահագ
 Չը կա վոչ վոք ինձնից ուժեղ...»
 Ասավ՝ զորքերն իրենց կարգին
 Փող փըչեցին, թմբուկ զարկին,
 Շըրըխկոցով, զըրընգոցով
 Ճամփա ընկան դեպի մեծ ծով:
 Հասան, տեսան — աչքեզ հըսկա,
 Դըլուխն եստեղ, վտաներ չըկա.

Դընտ, դընտ, թե վոր զըտնես...
 Յերկար ու մին ձըգված եսպես,
 Հըսկաչական քընով քընած:
 Եստեղ, եստեղ դիրքեր բըռնած՝
 Դես չոքեցին, դեն պառկեցին,
 Հա զարկեցին ու զարկեցին.
 Տեսան տեղից ժաժ չի դալի,
 Խըռմփում ե զարհուրելի,
 Խըռմփոցից, ինչ վոր խոսում,
 Մարդիկ իրար ձեն չեն լսում:
 Մոտ զընացին, ելի՛, ելի՛...
 Դարձյալ տեղից ժաժ չի դալի:
 Կամաց կամաց սիրտ առնելով,
 Գոգոռալով, հարաչ տալով,
 Դուրս թափվեցին թագուստներից,
 Յեւան վըրեն, դեսից, դենից,
 Վորը վոտին,
 Վորը քըթին,
 Վորը լանջին,
 Վորն աղանջին,
 Փորի վըրա, միրքի միջում,
 Զի լեն քըշում, նիզակ ճոճում,
 Զարկում, զարկում,
 Զըգում, թըքում,
 Հախոյում են եսպես, եսպես...
 Մին ել հըսկան են սարի պես
 Վըրա նստեց մեծ, ահարկու.
 Ինչ պատահեց՝ վոչ տեսնես դու,
 Հազարներով մարդն ու իր ձին
 Ֆակովն լեղան կոտորվեցին.

Վորն ել գլխից, քրթից, լանջից,
 կամ ուսերից, կամ ականջից
 ներքև ընկավ — թե մարդ, թե ձի,
 ներա որն ել դու իմացի:
 Շատ զարմացավ հըրեշ-հըսկան,
 թե, Տեր Աստված, արդյոք եսքան
 Մանրը-մունըր ի՞նչ բաներ են
 Վոր չեկել են թափվել վըրեն:
 Տեսավ, ինչ վոր կենդանի կան
 Վաղ են տալի թե չեա գնան.
 Բուռն արավ իր բըռնովը մեծ,
 Իրար խառնեց, վողջ հավաքեց,
 Գըրպանն ածավ
 Ու վեր կացավ,
 Լընգլընգալեն իրիկունը
 Գընաց հասավ իրենց տունը:
 Տանը իր պեա մեծ, ահագին
 Մի մեր ուներ, բարի մի կին:
 Գընաց հսկա մորը պատմեց
 Թե իրեն հետ ինչ պատահեց,
 Ու գըրպանից հանեց բոլոր՝
 Ահից խելառ ձին-ձիավոր:
 Բարի կինը հենց վոր տեսավ,
 — Ամա՛ն, վորդի, վա՛յ ինձ, տսավ.
 Խո՛նչ ես անում եդ խեղճերին,
 Բա չե՞ս տեսնում, թե քու ձեռին
 Վոնց են դողում: Ասենք մեծ ես,
 Միթե պիտի փոքրին տանջես:
 Մեծ թե փոքրը, ինչ ել լինի,
 Ամեն ապրող շունչ կենդանի,

Վոր. ծնվել ե արևի տակ,
 Ես աշխարհքում միատեսակ,
 Մինը պակաս, մյուսը ավել,
 Վողջ ել գլխեն խընդալ, ցավել,
 Չը պարծենա լերբեք վոչ վոք,
 Թե ինքն անհաղթ մի բան ե ջոկ.
 Միշտ ուժեղից ուժեղը կա,
 Իսկ ամենից ուժեղը՝ մահ...
 Բաց թող, վորդիս,
 Բաց թող՝ գընան,
 Ապրեն աղատ
 Ուր կամենան:

1908

Զ Ա Ր Ի Վ Ե Ր Ջ Ը

Կինում ե մի սար,
Են սարում մի ծառ,
Են ծառում փրչակ,
Փրչակում մի բուն,
Բընում լերեք ձագ,
Ու վըրեն Կըկուն:

— Կեկուն, Կեկուն, իմ Կուկունեք,
Յերբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչեք, գընաք,
Ուրախանաք...

Յերգում եր մարիկ Կըկուն.
Մին ել, ըհը՛, Աղվեսն չեկավ.
— Ես սարը իմն ե,
Ես ծառը իմն ե,
Ծառում փրչակ կա,
Փրչակում՝ մի բուն,
Ես ռվ ե լեկել
Տիրացել թագուն:

Ախ դու Կըկուն, հիմար Կըկուն,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
— Յերեք հատ ձագ, աղա Աղվես:
— Յերեք հատ ձագ ցուցց կը տամ քեզ:
Ու չես ասել, դու, անամոթ,
Մինը ծառա զըրկես ինձ մոտ:
Ջըգի շուտով մի հատը ցած,
Թե չե կացինս հըրեն սըրած,

Դընամ բերեմ,
Ծառը կըտրեմ...
— Վա՛յ, չը կտրես,
Ասաված սիրես,
Ես մինն ահա
Տար քեզ ծառա,
Միայն թե եղպես
Մի ջընջիլ մեզ
Բընով տեղով,
Ամբողջ ցեղով:

Խնդրեց մարիկ Կըկուն ու ձագերից մինը
ձըգեց ներքև: Աղվեսը հավի, առավ գնաց:

— Վա՛յ-վա՛յ, դու-դու,
Իմ լավ Կուկուն.
Վճր սե սարում,
Վճր անտառում,
Վճր թըփի տակ
Կորար մենակ...
Վա՛յ-վա՛յ, դու-դու,
Իմ խեղճ Կուկուն...

Լաց եր լինում մարիկ Կըկուն, մին ել, ըհը՛
Աղվեսը լետ չեկավ:

— Ես սարը իմն ե,
Ես ծառը իմն ե,
Ծառում փրչակ կա,
Փրչակում մի բուն,
Ես ռվ ե լեկել
Տիրացել թագուն:

Ախ, դու Կըկուն հիմար Կըկուն,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:

— Յերկու հատ ձագ, աղա Աղվես:
— Յերկու հատ ձագ ցույց կը տամ քեզ:

Ա՛խ, չարամիտ դու ավաղակ,
Ի՛նչ խաբար ե, յերկու հատ ձագ:

Ի՛նչ, ուզում ես եստեղ զոռով
Լըցնես ամբողջ կըկուներով...

Ձրգի շուտով մի հատը ցած,
Թե չե կացինս հըրեն սըրած,

Գնամ բերեմ,

Ծառը կըտրեմ...

— Վա՛յ, չը կտրես,

Աստված սիրես,

Ես ել առ տանր,

Ու թող դադար՝

Վերջինը դեթ

Մընա ինձ հետ...

Աղաչեց մարիկ Կըկուն ու յերկրորդ ձագն
եւ ձգեց ներքե: Աղվեսը հանի, ես ել առավ ու
գնաց:

— Վա՛յ-վա՛յ, վու՛յ-վո՛ւյ,

Ի՛նչի համար

Յեկա ես սար,

Բուն շինեցի

Ձագ հանեցի...

Աղվեսն չեկավ,

Տարավ կերավ,

Յերկու, յերկու,

Կուկու... կուկու...

Լուց կը լինում մարիկ Կըկուն:

Ես միջոցին — դա՛, դա՛, դա՛, Ագոաջն անց
կը կենում եմ կողմերով: Լըսեց Կըկուի լացի
ձայնը:

— Եղալես տխուր ու զարհուրիկ
Ի՛նչ ես լալիս, Կըկու քուրիկ:

— Ի՛նչպես չը լամ, ա՛ սանամեր:

Աղվեսն չեկավ եւ սըրտամեռ,

Գըլխիս եսպես փորձանք բերավ,

Ձագուկներըս տարավ կերավ:

— Վո՛ւյ, իմ աչքին, անխելք Կըկու,

Ի՛նչպես իզուր խաբվել ես դու

Սուտ խոսքերից չար Աղվեսի:

Վո՛ւյց թե սարը իմն ե՛ կասի:

Ո՞վ ե տըվել եմ լըրին սար:

Սարն ամենքինս ե հալասար...

Ո՞վ կը թողնի վեր կենա նա

Ամբողջ սարին դա տիրանա,

Անունը տա սըրած կացնի,

Սրան, նրան սուտ վախեցնի,

Ու մինն հսոր, մյուսը յերեկ,

Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...

Սե գրողի եմ տարածին

Ո՞վ ե տվել սըրած կացին:

Մին եւ վոր դա ու սպառնա,

Մի վախենա, քըշի գնա:

Եսպես ասավ Ագոաջն ու թռավ գընաց: Ահա

կըկին Աղվեսն չեկավ:

— Ես սարը իմն ե,

Ես ծառը իմն ե...

Հագվիլ եր ասել, Կըկուն բնից գլուխը հա-

նեց՝

— Սուտ ես ասում, դու, խաբեբան,

Անխիղճ դազան, անկուշտ, ագահ:

Ո՞վ է տվել եստեղ քեզ սար,
 Սարն ամենքինս ե հալածար:
 Ի՞նչ ես լեկել սուտ տեր դարձել,
 Յեւ ել հիմար՝ ճիշտ եմ կարծել,
 Զապուկներըս արվել եմ քեզ...
 Կորի, գընա, դու չար Աղվես,
 Հերիք ինչքան սուտ ես տսել,
 Հիմի գիտեմ, չեմ վախում ել.
 Կացին չունես ծառը կըտրես:
 — Ո՞վ ասավ քեզ:
 — Ագռափն ասավ:
 — Ագռափը. լավ:

Ու Ագռափը վրա բարկացած Աղվեսը պաշք
 քաշեց, հեռացավ: Գընաց մի դաշտում սուտ-
 մեռնուկի աճավ, վեր ընկավ, իբրեւ թե սառ-
 կել է: Ագռափն ել կարծեց, իրավ սատկել է.
 Թռավ, լեկավ վրեն իջավ, վոր աչքերը հանի:
 Աղվեսը համի, հանկարծ բռնեց:

— Դամ-դամ, դամ-դամ,

Աղվես աղա...

— Ա՛յ դու կռավան չարալեզու,
 Վե՛նց թե կըկուրն ասել ես դու,
 Թե չես կացին չունեմ սըրած...
 Կացին չունեմ... դե հիմի կաց...

— Վա՛յ, քեզ մեղա,

Աղվես աղա,

Յեւ եմ ասել, չեմ ուրանում,
 Ինձ քըքքըրի, ինձ կեր հում-հում,
 Տուր ինչ պատիժ սիրտդ կուզի,
 Բայց մի վերջին խոսքըս լսի:
 Յեւ եմ սարում, հենց դեմ ու դեմ,

Ենպես մի թանկ պահուստ ունեմ,
 Վոր չես գըտնի դու քո որում
 Վոչ մի թառում կամ անտառում:
 Ընչի համար եմ հանգին
 Գանձը կորչի հողի տակին:
 Արի գընանք, հանեմ տամ քեզ,
 Ենքան ուտես, ենքան ուտես...
 Թե չը լինի ու սուտ դուրս գամ,
 Յեւ հո եստեղ միշտ կամ ու կամ...

— Գնանք, ասավ Աղվեսը: Թե կը լինի,
 չատ լավ, թե չի լինի, ելի քեզ կուտեմ:

Գնացին:

Վերելից թռչելիս Ագռափը նկատել էր, վոր
 մի թփում պատկած էր գլուղացու շունը: Աղ-
 վեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ
 են թփի վրա:

— Ա՛յ, ասեց. ես թփումն ե իմ պահուստը:

Աղվեսն ազահ վրա ընկավ թփին. շունը
 վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին:
 Աղվեսը խեղդվելով սկսեց խոխոխալ.

— Ա՛յ, չես... մի, չես...

Զգուշ Աղվես,

Փորձանքի մեջ

Ընկնեմ եսպես...

Ա՛յ, անիրավ

Դու սե Ագռափ...

— Ինչքան ել վոր լինիս գգաւը,
 Զարի համար թե վաղ, թե ուշ,
 Եդ ե պահված, Աղվես աղա.

Դամ, դամ, դամ, դամ...

Պատասխանեց Ագռափն ու թռավ:

ՄՈԾԱԿՆ ՈՒ ՄՐՁՅՈՒՆԸ


Գիժ Մոծակի պարի ժամին
 Զարկեց հանկարծ աշնան քամին,
 Ուժը խրչեց, ուշքը տարավ:
 Գիժը մին ել մըտիկ արավ,
 վոր են արև
 Աշխարքն արդեն պատած վողջ սև,
 Լացով, թացով սուգ ե անում,
 Դողում, պաղում ու դալկանում...
 Շուտիկ, շուտիկ իրեն կինն ել
 Սուսիկ-փուսիկ կողքից կորել,
 Ով գիտի՝ ինչ ծակ եր գլուխը,
 Մինչև դարուն մեջը մըտել:
 Սուսած, սառած
 Ու սալարած
 Վեր թռավ՝ վար, դեռ ընկավ՝ դեն,
 Փիւր Մըրջունի տաքուկ ու շեն
 Բունը հիշեց, լեյալ, դընաց,
 Դրոան առջև տըխուր տըղզաց,
 — Բաց արեք, բաց...»
 Ես տարածամ՝ թըշվառ ձենից
 Կոպիտ, թուխ-թուխ,
 Հաստադըլուխ
 Մի պահապան զարթնեց քրնից,
 Ներսի մըթնում մի կերպ արավ,
 Փակած դուռը նեղ ծերպ արավ,
 Տեսավ՝ սևով, թևով զուգված՝
 Դրոան առջև մինը տընկված,

Վտաները թել,
 Խըք մի գել:
 — Հեյ, հիվ ես դու,
 Ախպերացու:»
 — Տը՛ղ-պը՛ղղ, ասավ, Մոծակն հմ լես:
 Բա չէս ասիլ՝ հապես, հապես.
 Ամառն ամբողջ,
 Ուրախ, առողջ,
 Պաճառ ու տաք
 Արևի տակ
 Կենքս աշխույժ սաղ եր ածում,
 Տես ել անհոգ խընդում, ցընծում,
 Տեսակ տեսակ պարեր պարում,
 Սըրա նըրա թուշն համբուրում,
 Ու վաչելում ամեն բանից,
 Ամեն բարուց ու սեղանից,
 Լիքը ալգում,
 Ճահճոտ մարգում,
 Ճոխ տըներում,
 Պալատներում...
 Մի անգամ ել, լերը վոր հապես
 Պարում ելի, մինը անտես
 Եսպես զարկեց՝ ուշքս անցավ:
 Ուշքի վոր գամ՝ ի՞նչ տեսնեմ լավ, —
 Տերկինքը թուխպ, լերկիբը սև,
 Դառը քամի, սառը անձրև,
 Արար աշխարհ պաղել, փոխվել,
 Կողքիցըս ել կինս ե փախել...
 Ել ի՞նչ տեսնեմ, վողջը մի-մի,

Եւ ի՞նչ լեզու կարա պատմի
 Կամ ի՞նչ բերան,
 Չըտեսնըմած, հըրաշք մի բան...
 Հիմի եսպես՝ սոված, մենակ
 Մընացել եմ պատերի առի,
 Տեղ չունեմ լես, կեր չի ճարվում:
 Յես ել եմ հո շատ մըճըրվում.
 Բայց ի՞նչ անեմ, ժւր գընամ ել,
 Յերեսս ելի ձեզ եմ արել:
 Ասածու սիրուն, մի խնայեք,
 Ես մի ձըմեռ շահեք, պահեք,
 Մի՞նչև նորից գարուն բացվի,
 Աշխարհքն ել եդ բարով լըցվի:
 — Դե լավ, դու կաց, ներս գընամ լես,
 Տեսնենք՝ ներսից ի՞նչ կասես քեզ:
 Ասավ պահնորդն ու մեջմեջ
 Կոկ սենյակներն անցավ անվերջ,
 Մի՞նչև հասավ ներսի տունը,
 Ուր աղբում եր մեծ Մըրջյունը
 Ասատ կլանըով,
 Ի՞նչ համայնըով:
 Գընաց իրենց լեզվով հայտնեց.
 Մըրջյունը լուռ լրսեց, մըթնեց,
 Ու լետ դարձավ
 Եսպես ասով:
 — Գիժ Մոծակի համար եմ լես
 Վողջ ամառը արևակեղ՝
 Ենքան ջանքով
 Ու տանջանքով
 Տուն տեղ դըրել, ճամփա հարթել,

Ամբար շինել, պաշար կիտել,
 Վոր ամառը ծուլլ պըտըտի,
 Ձմեռը դա նըստի ուտի...
 Մեր ծուլլերին ջարդել ենք մենք,
 Ուրիշ ծուլլի բերենք պահենք...
 Կերթաս կասես եդ անպետքին.
 Բանի, գործի ժամանակին
 Ով՝ փոխանակ աշխատելու,
 Ուշք ու միտքը տա խընդալու,
 Գորապ շըրջի, լերպի, պարի,
 Մըրա նըրա թուշն համբուրի,
 Ես կառ վազի, են կուռ ցատկի,
 Վեթը եղպես պիտի տատկի:

1916 Քոթոմ



50

ՀՀ Ազգային գրադարան



NL0977275

ԳԻՆԸ 90 Կ.
ԿԱԶՄԸ 25 Կ.

19
1
3342



ՕՎ. ԿՈՄԱՆԻԱՆ
Լեգենդներ, Բալլադներ և Պոեմներ
Երևան, Հայաստան, 1984